

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՀՈՐԻԶՈՆԸ

Հարցազրույց կոմպոզիտոր Ավես ՏԵՐՏԵՐՅԱՆԻ հետ

1977-ի նոյեմբերը Ավես Տերտերյանի համար նշանավորվեց երկու ակնառու իրադարձությամբ. կոմպոզիտորին շնորհվեց ՀՍՍՀ պետական մրցանակ, իսկ նրա «Կրակե օղակ» օպերան բեմադրվեց Հալլե քաղաքի (ԳԴՀ) երկրային երաժշտական թատրոնում: Վերջինը, ըստ էության, սովետահայ օպերային արվեստի անդրանիկ ելույթն էր արտասահմանում: Հեղինակին ինչ-ինչ պատճառներով չէր հաջողվել ներկա գտնվել իր օպերայի պրեմիերային: Բայց վերջերս Հենդելյան ընկերությունը Ա. Տերտերյանին հրավիրեց Հալլեում ամեն տարի ավանդապես անցկացվող Հենդելյան փառատոնին, որի բացմանը ներկայացվելու էր «Կրակե օղակը»:

Խոսքը տանք իրեն՝ Ավես Տերտերյանին.

— Նախ՝ Հենդելյան փառատոնի մասին: Անց է կացվում 1952 թվականից ի վեր և ամեն տարի: Ներկայիս 27-րդն էր: Դա մի վիթխարի երաժշտահանդես էր, որին մասնակցում էին Հալլեի ինչպես սիրողական, այնպես էլ պրոֆեսիոնալ երգչախմբերը, նվագախմբերը, անսամբլներն ու քատերախմբերը: Հրավիրված էին նաև մեներգիչներ ու մենակատարներ Բելիինից, Լայպիգից, Դրեզդենից և նույնիսկ ԱՄՆ-ից: Համերգներն ու ներկայացումները տեղի են ունենում Հալլեի երկրային թատրոնում, կոպտուրայի ամբիում, անգամ բացօթյա հավաքատեղիներում՝ Մորիցբուրգ ամրոցի բակում, Հենդելի հուշարձանի առջև, Հալլեի քաղաքի կիրճում և այլն: Փառա-

տոնի այս տարվա ծրագրում ընդգրկված էին հոշակավոր հալլեյացու «Հուդա Մանավել», «Ալեքսանդր Բալուս» օրատորիաները, «Թեգել» և «Ռադամիստ» օպերաները, գործիքային ու նվագախմբային երկերը, խմբերգերը... Մի խոսքով, երաժշտության որակները բարձրից բարձր էին. իսկ մեր բարեկամ գերմանացիների երաժշտական տարողական արվեստը, ինչպես գիտենք, նախանձելի մակարդակ ունի:

Հասկանալի է, որ այդպիսի մրցույթում ինձ համար չափազանց հուզիչ ու հետաքրքրական էր ականատես լինել «Կրակե օղակի» փառատոնային ներկայացմանը: Մինչ այդ ես կարդացել էի իմ օպերայի հալլեյան բեմադրության բնագրային տեղանքները, տեղակայել դրա պրեմիերայի մանրամասներին: Պատմում էին, օրինակ, որ առաջին ներկայացման երեկոյին թատրոնի պատշգամբից մի դուդուկահար և մի գլուխահար հնչեցրել են հայ ժողովրդական մեղեդիներ: Բայց, ինչպես ասում են, լավ է մի անգամ տեսնել, քան տասն անգամ լսել. այն, ինչ ես տեսա, գերազանցեց իմ նույնիսկ լավագույն սպասելիքները: Ներկայացումը կաշառում էր իր անթերի երաժշտական կատարմամբ և բեմադրական բարձրագույն կոպտուրայով: Գերմանական ականավոր կոմպոզիտոր և դիրիժոր Հանս Յորգեն Վենցելը, որի նախաձեռնությամբ ու երաժշտական ղեկավարությամբ էր ի կատար ածվել «Կրակե օղակի» հալլեյան բեմադրությունը, հանդես բերեց գեղարվեստական



Համպոգիտուր Ավետ Տերտրյանի դիմանկարը (գործ՝
Բ. Նաչատրյանի)

Նախ քան նախկին և դիրքորակաճ ապշեցուցիչ տեղ-
ափրամենտ: Ի դեպ, ես կուզեմայի, որ Հայաստա-
նի երաժշտական հասարակայնությունը մտիք ու-
նենա՞ր ծանոթանալու այդ հիանալի կամպոզիտու-
րի ստեղծագործությանը:

«Կրակե օղակի» բեմադրող-ռեժիսոր Լուսինե
Մանուկյանը հյուսել էր շատ իմաստալից ու դիմամիկ
բեմադրվածակներ. գործողությանն անմասնակից
կամ անտարբեր մարդ բեմում չէիր տեսնի: Նը-
կարիչ Բերդա Լայստաների ձևավորումը ևս ան-
խաբի միասնության մեջ էր դիրքորակ, ռեժի-
սորի կատարած աշխատանքի հետ: Եվ բնական
է, որ ես, շնորհիվ այդ ամենի, դիտում ու լսում
էի ստեղծածս գործը մի առանձնահատուկ ուշադ-
րությամբ, շունչս պահած հետևելով ինձ համար
կարևոր բեմադրության, բեմաստեղծ լուծում-
ներին: Բեմի վրա պատկերվում էր հսկայական
անպակտորներով գոտևորված երկրագունդը և
կարմիր բծերով պատված սևահողը... Դժվար էր

որոշել, թե աշխարհի որ անկյունում է ծավալվում
այդ էպիկական-հոգեբանական դրաման, մարդ-
կային մղումների այդ շիկացած հակամարտը:
Պարզ էլ չէր, թե որ ժամանակներում: Ներկայա-
նում էր այն, ինչն անսկիզբ ու անվախճան է, կա-
րող է կատարվել երբ ասես և որտեղ ասես:

Չմարող հիացմունքով եմ մտաբերում դերա-
կատար արտիստներին. սփանշելի երգչուհի և հմա-
յիշ դերասանուհի Բարբարա Հեյգերտին, նրա
արժանի խաղընկերոջը՝ Վերենե Հասսելմանին,
դրամատիկական քառորդի մեծահմուտ արտիստ
Ֆրանկ Հյոններբախին, որ Պոետի դերում հիա-
նալիորեն հնչեցրեց եղիշե Չարենցին՝ գերմանե-
րեն: Հալլեի երաժշտական քառորդում տնավել
ցայտուն կերպով դրսևորվեցին իմ օպերայի դրա-
մատուրգիան հատկանշող բեխտովան քառերար-
վեստի սկզբունքները: Եվ դա էլ, թեև, մալա-
տեց, որ ներկայացումը հասկանալի ու ստատուտ
լինի գերմանական հանդիսատեսին: Ես չստ ու-
րախացա, երբ ինձ հանդեսեցին, թե «Կրակե օղա-
կի» բոլոր ներկայացումները լեվ-լեցուն հանդի-
սասրահ էին ունենում: Եվ մտածեցի, որ այդպի-
սի ջերմ ուշադրությունը հայ արդի մշակույթի
հանդեպ մեզ ոչ միայն պիտի շոյի, այլև պար-
տավորեցնի. մի՞թե չա՞մեն, օրինակ, մենեթլենե-
րի ու դիրքորակների փոխանակում կատարել մեր
և հալլեյան օպերային քառորդների միջև: Գեր-
մանական հանդիսատեսի համար հետաքրքրա-
կան կլինե՞ր ունկնդրել «Կրակե օղակի» երևանյան
բեմադրումը, չեմ կասկածում, որ երևանում էլ
կուզեմային ծանոթանալ այդ օպերայի հալլեյան
տարբերակին, լսել, թե ինչպես է հնչում Չարեն-
ցի պոեզիան գերմաներեն: Ուրիշ կերպ ասած,
արվեստի միջոցով հառուցվող ծանոթությունը
մղում է ստեղծագործական բարեկամության...

Այս ամենի մասին պատմելիս, Ավետ Տեր-
տրյանը մեկ առ մեկ ցուցադրում է Հենդելյան
փառատոնի, այսպես ասած, գրավոր փաստադր-
մունքները՝ «Կրակե օղակի» գունագեղ ազդագրերը,
ներկայացման լուսանկարները, փառատոնի ծրա-
գիրն ու բուկլետները, թերթերի ու ամսագրերի
հրապարակած քննախոսականները, որոնց տակ
ստորագրել են հեղինակավոր արվեստագետներ
Վալտեր Զիգմունդ Շուլցեն, Մարիուս Ֆրեդեն, Ուր-
սուլա Հերմանը, Կարլ էռնստ Բերգունդերը,
Իոսիսիմ Լապը և շատ ուրիշներ: Բոլոր այդ
գրախոսները «Կրակե օղակ» օպերայի հալլեյան
բեմադրությունը համարում են Գերմանական Գե-



Шрифт
1978